

Հ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ց Ո Ւ Թ Յ Ա Ն Հ ՈՒՇ Ա Գ Ի Ր

ք. Գավառ

30 մարտի 2013թ.

«Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Համալսարան)՝ ի դեմս ռեկտոր Ռուզաննա Խաչիկի Հակոբյանի, ով գործում է Համալսարանի կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Գեղարքունիքի մարզի «Ծաղկունքի բաց դպրոց» հիմնադրամը» (այսուհետ՝ Բաց դպրոց)՝ ի դեմս տնօրեն Տեր Նշան քահանա Սարգսյանի, ով գործում է «Ծաղկունքի բաց դպրոց» հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), էլնելով Հայաստանի Հանրապետության կրթական համակարգին ներկայացվող արդի պահանջներից, «Ծաղկունքի բաց դպրոց» հիմնադրամի սովորողներին՝ նրանց հակումներին, կարողություններին, նախասիրություններին համապատասխան ապագա մասնագիտության ընտրության հարցում աջակցելու, Համալսարանում գործող մասնագիտությունների վերաբերյալ սովորողների մոտ պատկերացումներ և կողմնորոշում ձևավորելու նպատակով կնքեցին սույն Հուշագիրը հետևյալի մասին.

1. Հուշագրի առարկան

Կողմերը պարտավորվում են համագործակցել՝ «Ծաղկունքի բաց դպրոց» հիմնադրամի սովորողների իմացական, ստեղծագործական, վերլուծական կարողությունները զարգացնելու, Համալսարանում ուսուցանվող մասնագիտություններին նրանց ծանոթացնելու և այլ ուղղություններով:

2. Համալսարանը պարտավորվում է՝

2.1. «Ծաղկունքի բաց դպրոց» հիմնադրամին անհատույց տրամադրել ուսումնամեթոդական ձեռնարկներ, գիտական պարբերականներ, ուղեցույցեր, այլ կյութեր,

- 2.2. Մերժողական աջակցություն ցուցաբերել «Ծաղկունքի բաց դպրոցի» ուսուցիչներին, նրանց համար կազմակերպել կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներ,
- 2.3. Յուրաքանչյուր տարի «Ծաղկունքի բաց դպրոցի» աշակերտների համար կազմակերպել «Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր Համալսարան՝ նրանց հնարավորություն ընձեռելով հանդիպելու Համալսարանի ղեկավարության և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ՝ ծանոթանալու Համալսարանի ֆակուլտետներին, ամբիոններին, ուսուցանվող մասնագիտություններին և ուսումնառության առկա հնարավորություններին,
- 2.4. «Ծաղկունքի բաց դպրոցի» ավարտական դասարանների աշակերտների համար իրականացնել տեղեկատվական աշխատանք՝ նախապատրաստելով բուհ ընդունվելուն,
- 2.5. «Ծաղկունքի բաց դպրոցի» հետ համատեղ՝ ավարտական դասարանների լավագույն աշակերտների համար կազմակերպել օլիմպիադաներ, այլ միջոցառումներ,
- 2.6. «Ծաղկունքի բաց դպրոցի» ուսուցիչների որակավորման բարձրացմանը նպաստելու նպատակով նրանց մասնակից դարձնել Համալսարանում կազմակերպվող գիտաժողովներին և սեմինարներին:

3. Ծաղկունքի բաց դպրոցը պարտավորվում է՝

- 3.1. «Ծաղկունքի բաց դպրոցում» կազմակերպել Համալսարանի պրոֆեսորադասական անձնակազմի և սովորողների հանդիպումներ, ուսումնակրթական աշխատանքներ, զրույցներ, բանավեճեր և քննարկումներ, գրավոր աշխատանքներ, թեմատիկ մրցույթներ և այլ միջոցառումներ, որոնք կնպաստեն սովորողների մասնագիտական կողմնորոշմանը,
- 3.2. Ուսումնական գործընթացում ըստ անհրաժեշտության ներգրավել նաև Համալսարանի մասնագետներին՝ նրանց համար ապահովելով բնականոն գործունեության պայմաններ,
- 3.3. Համալսարանի ներկայացուցիչների հետ հանդիպումներին հրավիրել նաև «Ծաղկունքի բաց դպրոցի» աշակերտների ծնողներին՝ Համալսարանի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

4. Հուշագրի գործողության ժամկետը, փոփոխումը, լրացումը և գործողության դադարեցումը

- 4.1. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 5 տարի ժամկետով,
- 4.2. Սույն Հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Հուշագրի անբաժանելի մասը,
- 4.3. Սույն Հուշագիրը գործողությունը դադարեցնում է 5 տարի անց, եթե Կողմերի համաձայնությամբ չի երկարաձգվում,
- 4.4. Սույն Հուշագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- 4.5. Սույն Հուշագիրը բաղկացած է 3 էջից, կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները

«Համալսարան»
«Գավառի պետական համալսարան»
ՊՈԱԿ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1
Անելիք Բանկ
Հ/Հ 118061043626
ՀՎՀՀ 08402753
Հեռ.՝ 0-10-28-20-75
0-264-3-05-05, 0-264-2-57-75
Email – info@gsu.am, infogsu@mail.ru

«Օաղկունքի բաց դպրոց»
««Օաղկունքի բաց դպրոց» հիմնադրամ»
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Օաղկունք
ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ
Հ/Հ 220205140068000
ՀՎՀՀ 08606255
Հեռ.՝ 093-13-20-70
0-261-6-11-60

6. Կողմերի ստորագրությունները



«Համալսարան»
Ռ. Խ. Հակոբյան

«Օաղկունքի բաց դպրոց»
Տեր Նշան քահանա Սարգսյան